

6975

Կույնը բարձրակայսեցած

Եւ պիտի առ մասնաւու



Բիթիս

1896

696. "Հայ" ըրահի ի բարութեաց

891.542-3

P-12

Յակով Բարսահանեան

Ապրիլ Ապրիլ Ապրիլ

Թ Բ Ֆ Լ Ի Ս  
1896

2003


✓ 1364

891.542-3

F = 192

44

## Յակոբ Բարսիսանեան



1924

(U. 2 w h p h 2 b)

303

የ ተ ዘ ሻ እ ባ ቤ

Տպար. Վ. Հ. Հրատ. Բնկ. || Տիպ. Հրազ. Իզդ. Տ—Վ. 1896

1936

ԻՐԱՋՆԻՒ

ԲԱՐԵԿԱՄ

U.η w u h-p t k U. u h r h u w g b e w g h g

;n q b p n u q h u G u k r

Նւաս հեղինակից.


Ազնիւ հօրեղբայր!

Նւիրելով Զեղ իմ այս փոքրիկ աշխատա-  
սիրութիւնը, սրբազան պարտքս եմ կատա-  
րում, այս գրքի երեսին դրոշմելով Զեր անմո-  
ռանալի անունը, որ իմ սրտում միշտ վառ  
կըմնայ:

Զեր՝ Յ. Խաբախանեան.

12 օգոստոսի, 1896.

Թիֆլիս



Են ժամանակներում, մեզանից  
շատ հեռու մի քաղաքում,  
ապրում էր Սուլէյման անու-  
նով մի մարդ: Նա ունէր եր-  
կու զաւակ, որոնցից մեկը տասն  
հինգ տարեկան մի տղայ էր, իսկ  
միւսը նրանից եօթ տարով փոքր աղջիկ. ա-  
ռաջինի անունն էր Ասլան, միւսինը՝ Գիւլի:  
Սուլէյմանը արհեստով կօշկակար էր.  
Նա իր օրւայ աշխատանքով կերակրում էր  
երեք հոգուց բաղկացած ընտանիքը:  
Այդ քաղաքից մի փոքր հեռու գտնւում  
էր մի հին ուխտատեղի, որի տօնին քաղաքի  
բոլոր բնակիչները լինում էին այդտեղ:

Մի անգամ դրա տոնին քաղաքի բնակիչները իրանց մատաղներով գնացել էին վերոլիշեալ ուխտատեղին։ Սուլէյմանն էլ այդ օրը իր ընտանիքով գտնուում էր այնտեղ։ Ուխտաւորները գեռ արևը չըծագած, իրանց մատաղները զոհել էին, իսկ կանալք ճաշի պատրաստութիւն էին տեսնուում։

Այդ օրը ամենքի սրտին մի անսահման ուրախութիւն էր տիրում. ամեն կողմից լրսուում էր զուռնալի ձայնը։ Ուխտաւորներից մի փոքր հեռու խումբ-խումբ երիտասարդներ էին հաւաքւել, որոնք միմեանց հետ մենամարտելով, իւրաքանչիւրը իր տղամարդութեան ոյժն էր ցոյց տալիս։ Միւս կողմուում երեսում էր մի այլ տեսարան։ Այստեղ նոյնպէս խմբւած էին նորահաս օրիորդներ, որոնք երգում էին իրանց սովորական երգերը և խաղում «ե ա լ լ ի ն», իսկ ծերերը քաշւել էին հով ծառերի տակ, խօսակցում էին իրանց ներկայ և անցեալ վիճակի մասին։ Բայց այդ ամբողջ տեսարանից փոքր ինչ հեռու, կանաչ պարտէզների մէջ թռչոտալով խաղում և զբոսնուում էին մանր երեխաները։

Այդ օրը ուխտաւորներից ոմանք կամեցան վերադառնալ քաղաք, իսկ շատերը մնալ մի քանի օրով այդ ուխտատեղում։ Սուլէյմանի համար էլ, ի հարկէ, ինչպէս արհես-

տաւոր մարդի, թանգ էր ամեն մի ժամը, ուստի նա էլ մտադրւեց վերադառնալ քաղաք։ Իրիկնադէմին քաղաք վերադառնողները խառնւել էին իրարու. մէկն իր տղին էր որոնում, միւսն իր աղջկանը, երբորդն իր եղբօրն էր պտրում, իսկ այդ միջոցին Սուլէյմանն ընկած խուռն բազմութեան մէջ՝ իր միակ աղջկանն էր որոնում։

Երեխաները, բոլորն էլ խաղալուց յոդնած՝ վերադարձել էին իրանց ծնողների մօտ, բացի Գիւլիից, որ չէր երեսում ոչ երեխաների և ոչ էլ բազմութեան մէջ։

Սուլէյմանը սրան-նրան հարց ու փորձ էր անում Գիւլիի մասին, սակայն բոլորն էլ ասում էին «չենք տեսնել». Նա երկար որոնելուց յետոյ, ոչ մի տեղ չըգտաւ նրան։ Խեղճ ծնողները մնացին շւարած։ Սուլէյմանի կինը, որ մի նիհար, աչքերը խոր ընկած կին էր, շարունակ ողբում էր։

Գիշերային խաւարը արդէն պատել էր ամբողջ աշխարհը, բայց լուսինը երբեմն սև ամպերի տակից գուրս սահելով՝ ճանապարհ էր ցոյց տալիս քաղաք վերադառնող բազմութեան։ Սուլէյմանը երկար որոնելուց յետոյ չըկարողանալով նրա հետքն իսկ գտնել, տըխուր ու տրտում վերադարձաւ քաղաք։ Այդ օրւանից նրա կին Փարինը միշտ իր օրը լաց

ու կոծով էր անցկացնում։ Սուլէլմանն ու Ասլանը երբ որ տանը չէին լինում, նրա համար ոչ ուտել կար, ոչ խմել, այլ աղի արտասուքներն էին հովացնում նրա դառնացած սիրտը։

Քաղաք վերադառնալուց յետոյ, Սուլէլմանը մի ձի վարձեց և մի ամբողջ ամիս մերձակալ գիւղերը և նրա սահմանները ման եկաւ, բայց դարձեալ ոչ մի տեղ իր կորուստի հետքը անգամ չըկարողացաւ գտնել։ Այսպէս ահա թշւառ ծնողները զրկւեցին իրանց միակ աղջկանից։

Այժմ դառնանք դէպի Գիւլիին։

Բ.

Նոյն օրը, երբ Գիւլին խաղում էր իր ընկերուհինների հետ պարտէզների մէջ, նրա ուշքը գրաւում են գոյնզգոյն ծաղիկները և նա մտադրւում է մի փունջ պատրաստել ու և ապա վերադառնալ իր ծնողների մօտ։ Ահա այսպէս Գիւլին, իր մանկական ցանկութիւնը կատարելու համար, բաժանւում է իր ընկերներից և շարունակ մի կողմի վրայ գնալով սկսում է ծաղիկներ քաղել։

ար քայլափոխում մի ծաղիկ հազիւ էր քաղում վայրենի խոտերի միջից, որովհետեւ ամեն ծաղիկ նա չէր հաւանում։ Փոքրիկ Գիւլիի ուշքը ալնքան էին գրաւել գեղեցիկ ծաղիկները, որ բաւական հեռացել էր իր ընկերուհիններից և ուխտատեղիից։ Իշնելով դէպի մի ձոր, նա չէր իմանում թէ ինքը որտեղ է գտնւում, բայց երբ իր ձեռքի փունջն աւարտեց և կամենում էր վերադառնալ, յետ նայեց տեսաւ, որ ինքը գտնւում է մի ձորի մէջ։ Իսկոյն ահան ու սարսափը տիրեց նրան։ Նա մնաց շւարած և չէր իմանում ինչ անէր. թէև շատ հեռու չէր այդտեղից մինչև ուխտատեղին, բայց եթէ այդ ձորում օրական հարիւրաւոր մարդիկ կոտորէին, ոչ ոք չէր կարող իմանալ։ Մի նեղ քարւանի ճանապարհ էր ընկած այդ ձորի միջով, որից քարւանը անպակաս էր լինում։

Գիւլին, որ այժմ գտնւում էր ձորի միջին, աշխատում էր գուրս գալ ալնտեղից, բայց նրա փոքրիկ ոտիկները յոգնել էին, այնպէս որ մի կողմից ահը, միւս կողմից յոգնածութիւնը՝ արգելք էին լինում նրան հեշտութեամբ գուրս գալու ձորից։ Զարագուշակ բախտը կարծես պտտւում էր Գիւլիի գլխին. այդ միջոցին ձորի միջով անցնում էր մի փոքրիկ՝ տասնեակ ուղտերից բաղկացած քարւան։

Երբ որ ուղտապահնները տեսան Գիւլիին ձորի մէջ, իսկոյն նրանցից մէկը ցած իջնելով՝ բռնեց նրան և իրանց հետ տարան ալնտեղ, որտեղ իրանք էին գնում:

Ուղտապահնները Գիւլիին տարան մի քաղաք և ալնտեղ վաճառեցին մի միջահասակ մարդու վրայ, որի անունն էր Մուխտար:

Մուխտարը այդ քաղաքի խանի ներքինապետն էր: Նա Գիւլիին խնամում է, պահում է, մինչի նրա չափահաս դառնալը: Նա այնքան գեղեցիկ էր, որ նրան մէկ անգամ տեսնող կամենում էր կրկին տեսնել:

Մի անգամ Մուխտարը խանի հետ առանձնացած ժամանակ, յայտնում է նրան թէ իրան մօտ ահա եօթը տարի է, ինչ պահում է մի գեղեցիկ աղջիկ, որի նմանը չըկալ իր բոլոր հարեմների մէջ, և որը պէտք է ընծալէ իր տիրոջը:

Այսպէս ներքինապետ Մուխտարը, իր չար մտադրութիւնը զլուխ բերելու համար, մի օր Գիւլիին գեղեցիկ կերպով հագցնում է և տանում խանի մօտ: Երբ մտնում են խանի դահլիճը, որտեղ նա միշտ ընդունում է իր կանանց, խանը նրան տեսնելուն պէս՝ մընում է զմայլւած և իր մտքում ասում է. «Ճշմարիտ որ, դեռ այդպիսի գեղեցկուհի չէ

եղել իմ կանանց մէջ», իսկ Մուխտարը գլուխ տալով ասում է.

— Թող իմ տէրը մեծ ընծալ չըկարծէ:

— Ո՛չ, Մուխտար,—պատասխանում է խանը, — դու ինձ ծառայութիւններ շատ ես արել, բայց ես փոխարէնն ոչինչ բանով չեմ վարձատրել, սակայն քո այդ վերջին թանգագին ընծալի փոխարէն դու կըստանաս քո ծանրութեամբ ոսկի ու կըլինես իմ բոլոր հարեմների կառավարիչը:

Այս տսելուց յետոյ, խանը հրամայեց որ իսկոյն Գիւլիին տանեն սրահը, պատրաստեն նրա համար երկու շքեղ առանձին սենեակներ, որոնք զարդարւած լինեն ոսկեալ իրեղէններով և պատւիրեց երկու աղախին նշանակել նրան ծառայելու. իսկ Մուխտարին հրամայեց որ գնալ, իլ գանձարանից ստանայ իր քաշով ոսկին:

Այսպէս ահա Գիւլին, եօթը երկար տարիներից յետոյ, գտնւում էր հեռոն մի երկրում, խանի հարեմում:

### Պ.

Այդ օրից անցել էր եօթը տարի. Սուլէլմանը և նրա կինը խորին ծերութեան մէջ

Էին: Նրանք երկար տարիների ընթացքում մոռացել էին անցեալը. այժմ նրանց միակ մխիթարութիւնը Ասլանն էր: Նրանց մտքից հեռացել էր Գիւլին. հազիւ կըպատահէր, որ նրանք միտ բերէին իրանց կորած աղջկան, բայց նրա եղբօր՝ Ասլանի սրտից չէր անցնում իր սիրելի քուրքը: Գիշեր ու ցերեկ զանազան մտքերի մէջ խորասուգւած՝ մտածում էր իր կորած քրոջ մասին:

—Ախ, Տէր Աստւած, եթէ ես իմանալի թէ ով փախցրեց նրան, կամ ուր տարան, սրտումս ցաւ չէր մնալ. եարաք կենդանի է նա, լիշում է իր ծնողներին, արդեօք լիշում է նա ինձ:

Այսպէս շատ անգամ նա ինքն իրան երկար խօսում էր, բայց դարձեալ չէր կարողանում իր սրտին բաւականութիւն տալ, ուստի և վշտերով լի սիրտը հանդարտեցնելու համար դուրս էր դալիս տնից և գնում էր իր հօր խանութը:

Մի օր, ըստ սովորականին, նա դուրս գալով տնից, կամենում էր գնալ խանութ, երբ նրա դէմ առ դէմ կանգնեց մի կարճահասակ մարդ և բարեելով հարցրեց.

—Կօշկակար Սուլէյմանի տունը ո՞րտեղ է գտնուում:

—Ախ է Սուլէյմանի տունը, ումն էք

կամենում,—ասաց Ասլանը ցոյց տալով իրանց տունը:

—Ահա,—ասաց Եկւորը, հանելով ծոցից մի նամակ և տալով նրան՝ շարունակեց.—այս նամակը Ահմէդ խանի քաղաքիցն է, ինձ մի ստրկուհի տւեց, և շատ խնդրեց որ լանձնեմ իր հօրը:

Ասլանը նոյն րոպէին բնազդմամբ իմացաւ, թէ նամակը ումնից է և դարձաւ նրան սսելով.

—Դուք տեսաք նրան:

—Ինչպէս չէ,—ասաց Եկւորը,—ես ինքս խանի մօտ եմ ծառայում: Երբ նա իմացաւ, որ ես այս կողմը պիտի գամ, նա ինձ շատ խնդրեց, որ այդ նամակը հասցնեմ իր ծնողներին:

Երբ Եկւորը իր խօսքը վերջացրեց, Ասլանի աչքերում երևեցան արտասուքի կաթիւներ, բայց նա իրան զսպեց և ասաց.

—Այժմ Բնէջ էք կամենում ձեր այդ լաւութեան փոխարէն:

—Մենք ձեր առողջութիւնից աւելի ովինչ չենք կամենում—պատասխանեց համեստութեամբ նամակաբերը, —միմիայն այդ նամակը հասցըէք իր հօրը:—Նա կարծում էր, որ իրան հետ խօսողը այդ նամակի տէրը չէ:

—Աչքիս վրայ, —ասաց Ասլանը:

Նամակաբերը մնաս բարով ասելով՝ հե-  
ռացաւ, իսկ Ասլանը քարացած արձանի պէս  
նայում էր նրա յետեից. երբոր նամակաբերը  
անցաւ խուլ փողոցներից մէկը, նրա գնալուց  
յետոյ նա նամակը բաց արեց և կարդաց, որի  
մէջ գրւած էր հետեւեալը.

«Ո՞վ ծնողներ, եթէ կենդանի էք,  
«Եթէ յիշում էք ձեր եօթը տարւայ կո-  
«րած աղջկան, շտապեցէք ազատելու  
«նրան: Ո՞վ եղբայր, միթէ չես յիշում  
«ինձ. միթէ եղբայրը այդպէս շուտով  
«է մոռանում իր կորած քըռջը: Եօթը  
«Երկար տարի էր, որ ես ընկած էի մի մար-  
«դու ձեռք, նա թէև ինձ լաւ պահեց,  
«խնամեց, բայց վերջը ինձ ընծայեց այս  
«քաղաքի խանին, և արդէն երկու ամիս  
«է, որ ընկած եմ խանի հարեմների շար-  
«քը: Շտապեցէք, եթէ կարող էք, մի  
«կերպով ազատել ինձ ալստեղից»:

Նամակը վերջացնելուց յետոյ, Ասլանը  
շտապեց տուն:

Պ.

Մայիս ամիսն էր:

Առաւօտեան արեգակը դուրս գալով՝  
սփռել էր իր ոսկէփայլ ճառագայթները  
արար աշխարհի վրայ: Ամայի դաշտե-  
րում լսում էր թուշունների ուրախ եր-  
գեցողութիւնը, որոնց ձայները մեծ ուրախու-  
թիւն էին պատճառում ճանապարհորդներին: Այդ միջոցին ընդարձակ դաշտի միջով գնում  
էր մի ձիաւոր, զէնք ու զրահի մէջ թալւած:

Դա երկարահասակ և բաւական առողջ  
կազմւածքով մի երիտասարդ էր, որի տարի-  
քը քսան և երկուսից անց չէր կարող լինել:  
Նրա խոժոռ աչքերից կարելի էր նկատել  
կատաղի բարկութիւն, որ մօտ եօթ տարի  
եռ էր գալիս նրա սրտում:

Դա ընթերցողին ծանօթ Ասլանն էր:  
Օրից բաւական անցել էր, երբ նա  
հասաւ երկու հակադիր փոքրիկ բլուրներին,  
որոնց մէջ տեղը մայիսեան կանաչ խոտը թան-  
գագին գորգի պէս փռւել էր: Նա կամեցաւ  
այստեղ փոքր ինչ հանգստանալ և ապա  
երեկոյեան հով ժամանակ դարձեալ շարու-

նակել իր ճանապարհը։ Նա ցած իջնելով  
ձիուց, նրա ոտներին կապանք գցեց և թողեց  
արածելու. իսկ ինքը իր ճանապարհոր-  
դական խուրջինը իր հետ առնելով, նստեց  
կանաչ խոտի վրայ։ Վեցըրած պաշարից նա  
փոքր ինչ նախաճաշեց, յետոյ խուրջինը  
գլխատակը դնելով՝ կամեցաւ փոքր ինչ  
ննջել։

Ասլանը նոր էր քուն մտել, երբ նրա  
ականջին հնչեց մի բարակ զանգակի ձախ:

—Այս ինչ ձայն է,—ասաց նա ինքն ի-  
րան և իսկոյն տեղից վեր կենալով բարձրա-  
ցաւ բլուբներից մէկը։ Նախ քան բլու-  
բը բարձրանալը՝ նա նայում էր այն  
կողմը, որտեղից գեռ նոր պիտի անցնէր, բայց  
ձայնը հնչւում էր եռեկի կողմից, և  
երբ նա յետ նայեց, տեսաւ, որ եկտորը մի  
սպիտակ ձիաւոր էր, թաղւած նոյնպէս գէնք  
ու զրահի մէջ։ «Սուրհանդակ է, —ասաց  
նա իր մտքում, —զա կամ նազիմ խանի մարդ-  
կանցից է, կամ Թաթար խանի»։

Մինչդեռ Ասլանը այդ կարծիքի մէջ էր  
եկուորի մասին, չանցած հինգ ըոպէ, ձիա-  
ւորը կանգ առաւ նրա դէմ և տւեց իր բա-  
րեւը։ Ասլանը նոյնպէս բարեւեց նրան և  
հարցրեց։

— Դէպի ուր, բարի լինի:

— Դէպի Ահմէդ խանի քաղաքը, — ալատասխանեց սուրբ Հանդակը:

—Φωνη Աստծոյ, ասաց Ասլանը, ուրեմն մենք այսօր ձեզ հետ կրծանապարհենք:

— ՚Իուք էլ նոյն քաղաքն էք գնում, —  
Հարցը սուբհանդակը:

— Այն, —պատասխանեց Նա:

—Քանի՞ օր է ինչ ճանապարհ էք  
լ:

— *SauN k\xiopru op:*

— Լաւ էք եկել, — ասաց սուրհանդակը,  
մի առանձին բաւականութեամբ:

— Դէս ուրեմն, եթէ կամենում էք ինձ  
հետ գալ, — կտրեց նրա խօսքը սուրհանդակը,  
— պատրաստեցէք, որովհետև ես շատ ժա-  
մանակ չունեմ, մի կարևոր նամակ եմ տա-  
նում խանին:

—Այս ըոսկէիս, —ասաց նա և վազեց  
ձիու թամբը ուղղելու. պաշարի խուրջինը  
վերցնելով, նստեց իր ձիու վրայ և ճանա-  
պարհ լնկաւ սուրհանդակի հետ միասին:

Ճանապարհին՝ սուրհանդակը կամեցաւ իմանալ, թէ նա ի՞նչ նպատակով է գնում Աշմէդ խանի քաղաքը, ուստի փոքր ինչ առաջ գնալուց յետով չարգրեց.

С. С. Р. А. Публичная библиотека  
7/1 1922  
БИБЛИОГРАФИЯ МАССИВА № 9  
\* И. ИЗШУРЫЗИТУ МЧУ

— Ներեցէք համարձակութեանս, դուք  
ինչու համար էք գնում այդ քաղաքը:

— Ես ճշմարիտ ասած, «Նազիմ» խանի  
մօտ ծառայ էի. երբ նա մեռաւ, հօր տեղը  
նստեց իր որդին, նրանից յետոյ մեր բնաւո-  
րութիւնները իրար ըլքոնեցին, և ես արձակւե-  
ցալ իմ պաշտօնից. այժմ գնում եմ Ահմէդ խա-  
նի քաղաքը, գուցէ նրան գործեր շատ ունե-  
նալ, կըմտնեմ նրա մօտ ծառայութեան:

— Գործ այժմ շատ կալ, բայց ծառա-  
յող է պէտք: Եթէ ճշմարիտ դուք նա-  
զիմ խանի մօտ ծառայել էք, այն ժամանակ  
Ահմէդ խանը շուտով կ'ընդունի ձեզ, որովհե-  
տեւ նա նազիմ խանի հետ շատ սիրով էր,  
բայց այժմ որդու հետ յարաբերութիւն չու-  
նի: Միամիտ եղէք. երբ որ կըհասնենք  
քաղաք, դուք միւս օրը կըգաք խանի դուռը,  
իսկ ես այնտեղ կըլինեմ և ձեր մասին կը-  
լալտնեմ ու անշուշտ մի պաշտօն կըգտնէի  
ձեզ համար:

— Ենորհակալ կըլինեմ, — ասաց նա, — ե-  
թէ այդքան բարի լինէք: Վերջապէս նրանք  
բարձրացան մի քարաժայոի գլուխ, որտեղից  
երեսում էր քաղաքը:

— Ահա, տեսնո՞ւմ էք, — ասաց սուրհան-  
դակը, ցոյց տալով երևացող քաղաքը. —  
դուք այժմ կարող էք հեշտութեամբ մտնել

քաղաք, իսկ ես պէտք է, փոքր ինչ առաջ  
գնամ: Վերջացնելով իր խօսքը, նա մտրակի  
մի հարւած հասցնելով ձիուն, անյայտացաւ  
վեր բարձրացող սպիտակ փոշու մէջ:

Սրեգակը արդէն մալլ էր մտել, երբ  
Ասլանը ևս մտել էր Ահմէդի քաղաքը:

## Ե.

Ասլանը երբ հասաւ այդ քաղաքը,  
իջևանեց մի պառաւ կնոջ աան, որ բացի  
իրանից ուրիշ ոչ մի բարեկամ չունէր:

Գիշերն անցաւ:

Առաւտօտեան Ասլանը դուրս եկաւ տնից  
և հարց ու փորձ անելով, գտաւ խանի դի-  
ւանատունը: Երբ նա մտաւ դիւանատուն, իս-  
կոյն նրան հանդիպեց ծանօթ սուրհանդակը:  
Սուրհանդակը տեսնելով նրան՝ ասաց.

— Լաւ եղաւ որ դուք եկաք, թէ չէ  
ես պէտք է որոնէի ձեզ և գուցէ չըգտնէի:  
Երէկ ես տեղ հասնելուն պէս՝ խանի գըլ-  
խաւոր կառավարչին յալտնեցի ձեր մասին.  
նա էլ ասաց շատ լաւ, թող գալ, կարող ենք  
հարեմի մէջ մի պաշտօն տալ:

— Ինչու չէ, — պատասխանեց լի ուրա-

իութեամբ Ասլանը,—մեծ ուրախութիւնով  
յանձն կառնեմ, ինչ պաշտօն էլ որ տաք կա-  
տարելու:

—Դէս, ուրեմն վաղը առաւօտեան ձեր  
շորերը և իրեղէնները ժողովեցէք ու եկէք—  
Այստեղ ձեզ համար լաւ կանցնի. ժամանա-  
կով խանը ձեր հաւատարմութիւնը ի նկատի  
ունենալով, կարելի է որ մեծ պաշտօններ  
ևս յանձնի ձեզ, բայց ձեր անունը հարկա-  
ւոր է իմանալ, հարցրեց սուրհանդակը:

—Իմ անունն Օսման է,—ասաց նա-  
ծածկելով իր իսկական անունը:

—Եստ բարի, ուրեմն ես կըգրեմ ձեր  
անունը և կըներկայացնեմ խանին:

—Եստ շնորհակալ եմ,—ասաց Ասլանը  
և դուրս գալով խանի դիւանատնից՝ ուղակե-  
րնաց իր բնակարանը:

Ասլանը հասնելով տուն, յայտնեց իր պա-  
ռաւ տանտիկին, որ ինքը առաւօտեան  
պիտի դուրս գնայ ախտեղից. ուստի վճարե-  
լով իր երկու օրւայ վճարը, կապկաց իրերը  
և պատրաստ սպասում էր լոյսը բացւելուն:

—Ուր պիտի գնաք, —հարցրեց պառա-  
տանտէրը:

—Գործի, —պատասխանեց Ասլանը:  
Պառաւ տանտէրը չըհետաքրքրւելով

դուրս գնաց, իսկ Ասլանը գլուխը դրաւ իր

Խուրջինի վրայ և ընկաւ խորին մտած-  
մունքների մէջ: «Գտայ ամեն մի հնարք,  
բայց ինչ ձեռվ պիտի մօտենալ նրան.  
Ճէ որ նա եօթը տարի է ինձ չի տեսել. ար-  
գեօք կարող է ճանաչել ինձ, բայց նախ քան  
այդ, պէտք է մտածել, թէ ինչ հնարք պիտի  
գործ դնեմ, որպէսզի առանց կասկածի փախ-  
ցնեմ նրան. չէ որ հարեմի քարերն ևս կա-  
րող են արգելք լինել. բաւական է, եթէ նոյն  
խոկ ամենալետին ծառան կամ աղախինն  
իմանայ, այն ժամանակ ցաւալի պիտի լինի  
իմ սկսած գործի վախճանը, և ի զուր կանց-  
նեն իմ կրած բոլոր ջանքերը, որոնց հարթե-  
լով, հասել եմ արդէն նպատակիս կէսին. օչ,  
եթէ Գիւլին իմանար իմ ալստեղ գտնւելս  
կամ նոյն իսկ պաշտօն ստանալս, այնտեղ՝ որ-  
տեղ հէնց ինքն է գտնւում, կարելի է, որ այն  
ժամանակ հեշտութեամբ ազատէի ես նրան.  
բայց քանի որ չի իմանում կամ գուցէ անց-  
նելով եօթը երկար տարիներ, մոռացած լինի  
ծնողներին և եղբօրը. բայց ոչ, նա մոռացած  
չէ լինիլ ոչ հօրը, ոչ մօրը և ոչ էլ իր սիրե-  
լի եղբօրը. նա նոյնպէս ամեն ըոսէ մտա-  
քերում է իր եղբօրը և ծնողներին, ինչ-  
պէս ես նրան:»

Այս մտքերը երկար պղտորում էին նրա  
մինչև քունը նրան յաղթեց:

Կէս գիշեր էր երբ նա զարթեց. նորից  
լիշողութիւնները բարդւեցին նրա գլխում:  
Խոնաւ սենեակի մէջ տիրում էր խորին  
լոռութիւն. մի կողմում վառւում էր ճրագը,  
իսկ միւս կողմում, չոր թախտի վրայ պա-  
ռաւ տանտիկինը քաղցը քնի մէջ խռըմ-  
փում էր:

Ասլանը նորից պառկեց քնելու:

Զ.

Գիշեր էր:

Ամբողջ քաղաքը քաղցը քնի մէջ էր.  
այդ միջոցին Ահմէդ խանի հարեմի կանալքն  
էլ իրանց գւարճութիւնները վերջացնելով,  
պառկած էին իրանց ննջարաններում, բացի մի  
ստրկութիւնց, որ այդ միջոցին թաւալում էր  
իր անկողնում, և քունը նրա աչքերին մօտ  
չէր գալիս:

Դա Գիւլին էր:

Այդ ըոպէին նրա ականջին հասաւ մի  
մեղմ երգի ձայն, և նա փոքր ինչ ականջ  
գնելուց յետոյ, անկողնից կամաց վեր կացաւ  
ու պատուհանը բացեց, որտեղից երևում էր  
հարեմի ընդարձակ պարտէղը: Մի քանի ըո-

պէտ ականջ գնելուց յետոյ, կամաց նա իր շո-  
րերը հագաւ և պատուհանից իջաւ գէպի  
պարտէղը և սկսեց գնալ այն կողմը, որտե-  
ղից լսւում էր երգի ձայնը: Դժբախտաբար  
մի այնպիսի մութ գիշեր էր, որ մարդ մի  
բան նշանակել չէր կարող. նա այնպէս կա-  
մաց էր քայլում, որ ոչ ոք չէր կարող նրան  
նկատել, բայց երբեմն ծառերի տերևները  
մեղմ քամուց շարժւելով, ահ էին գցում նրա  
սիրութ: Բաւական էր որ այդ բանն աղախին-  
ներից մէկը նկատէր, այն ժամանակ սոսկալի  
պատժի պիտի ենթարկւէր նա: Վերջապէս  
անցաւ դէպի պարտէղը և կանգնեց մի ծառի  
տակ: Սկսեց կրկին ականջ գնել: Այդ միջո-  
ցին երգողը մօտեցաւ նրան, բայց մութն  
լինելով, նա ոչինչ չընկատեց. նա ուղղակի  
անցաւ երգելով, իսկ Գիւլին կանգնած՝ տես-  
նում էր, որ երգողը հարեմի ծառաներից  
մէկն է, որ գնում էր ուղղակի իր սենեակի  
կողմը: Նա վախենում էր, որ կըդիտէ  
իր սենեակը և կըտեսնէ պատուհանը բաց,  
իսկ ներսը ոչ ոք: Նա ընկաւ յուսահա-  
տութեան մէջ. «Տէր Աստուած, այս ինչ ճրգ-  
նաժամի մէջ եմ գտնւում ես». մըմնջում  
էր նա արտասուքը անընդատ աչքերից թա-  
փելով: «Ոչ, ուրիշ հնարք չըկալ, պէտք է  
գնալ այդ երգողի յետևից, որ այժմ զարմա-

մացած իմ սենեակին է նայում, պէտք է գնալ աղաջել նրան, որ նա գաղտնի պահէ իմ այս գիշերւայ կիսին դուրս գալլ սենեակից։ Թշւառ Գիւլին գտնւում էր անտանելի վիճակի մէջ։ Նա այդ գիշերւայ իր մի քանի քայլը պարտէզի մէջ՝ մահացու էր համարում իր համար, բայց չըգիտէր որ այդ երգողը իր եղբայր Ա.սլանն էր, որը այժմ իր սենեակի մօտն էր։ Նա իր տեսակցութեան պատճառով էր երգում ու մօտենում նրա սենեակներին։ Վերջապէս երկար կանգնելուց յետոյ, նա կամացուկ քայլելով մօտեցաւ և տեսաւ բաց պատուհանից, որ ներսը ոչ ոք չըկայ, բայց երբ նա յետ նայեց, տեսաւ մի ստեր իր գիմացը։ Ա.սլանը նոյն վայրկեանին իմացաւ, որ նա այդ սենեակի միջի կինն է և դառնալով նրան՝ ասաց։

—Ուր էիք այս կէս գիշերին, պայծառափայլ խանում։

—Ախ, այդ երգողը դուք էք պատւելի Օսման, — պատասխանեց արտասւախառն ձայնով Գիւլին։

—Այս, խանում, ես էի, բայց դուք ուլ էիք։

—Ես քո երդի ձայնը լսելով՝ յուզւեցի. ինձ շատ դուր եկաւ քո երգը և վեր կենալով՝

աղախիններին չըխանգարելու համար, ուղղակի պատուհանից ցած իջայ դէպի պարտէզը։

—Դուք այդ երգը ումնից էք սովորել։

—Ես այս երգը, շատ փոքր ժամանակից եմ սովորել. ինձ մի քոյլ ունէի, որ այժմ եօթ տարի է, ինչ կորած է, սա նրա երգն է։

Գիւլին վերջին խօսքից յետոյ այլեւ չըկարողացաւ համբերել և իր ձեռքերը տարածելով, ընկաւ նրա պարանոցով և ասաց։

—Ո՛չ, սիրելի եղբայր, որտեղից ուղարկեց քեզ Աստւած որպէս մի վրկարար. Հրեշտակ ինձ համար։

—Քո նամակդ ինձ հասցըեց այստեղ, սիրելի քոյլիկ, ասաց Ա.սլանը գրկելով քրոջը։

Յետոյ Ա.սլանը պատմեց իր զլսի անցածը, թէ ինչպէս յաջողւել էր իրան այդտեղ ընկնել։ Գիւլին նոյնպէս պատմեց, թէ ինչպէս մի ըոպէ առաջ վախենում էր նրանից, իսկ այժմ, այժմ իրար գրկախառնում են և իրանց եօթը տարւայ կարօտն առնում։

Երկար տեսնելուց յետոյ, Գիւլին հարցըց։

—Արդեօք ողջ են մեր ծնողները։ Ա.սլանը պատասխանեց.

—Այս, սիրելի քոյլիկ, ամենքը ողջ են, և մենք էլ, մի երկու շաբաթից յետոյ, կըդատնենք հալրական օջախում։

— Բայց աւստեղից ի՞նչպէս կարող ենք  
ազատւել:

— Այդ իմ գործն է, միայն լսիր ինձ.  
Նախ պէտք է որ իմ որոշած ժամին արթուն  
լինես. ոչ մի պատրաստութիւն հարկաւոր չէ.  
Ես ինչպէս որ կարգադրեմ, գու լսիր ու կա-  
տարիր:

Վերջացնելով Ս.սլանը իր խօսքը, ասաց.

— Մեր խօսակցութիւնն աւելորդ է, կա-  
րող են մեզ նկատել, արդէն ժամանակ է առ  
այժմ միմեանցից բաժանելու:

— Այս, սիրելիս, մինչև անգամ այս պա-  
տերը կարող են մեզ մատնել. այժմ գնա՞ քը-  
նիր, իսկ ես նշանակեալ ժամին արթուն  
կըլինեմ:

Բարի գիշեր մաղթելով, Ս.սլանը հեռա-  
ցաւ. Գիւլին ևս մտաւ իր սենեակը և պառ-  
կեց քնելու. բայց քունը մօտ չէր գալիս և  
նա մնաց արթուն մինչի լուսաբաց:

## Է.

Այդ օրից անցել էր մի քանի շաբաթ,  
երբ մի երեկոյ, Բարիամի պատճառով, Ա.Հմէդ  
խանի պալատը փալում էր կարմիր-կանաչ

լապտերներով։ Նրա ընդարձակ մեծ դահլիճը  
զարդարւած էր պարսկական գորգերով։ Այս-  
տեղ նստած էր ինքը՝ Ա.Հմէդ խանը, քաղաքի  
մի քանի նշանաւոր բէգերի հետ, իսկ նրանց  
հանդէալ նստած էին փողհարները, որոնք նը-  
ւագում էին պարսկական զանազան եղանակ-  
ներ։

Գիշերից ըաւական անցաւ. նրանք կեր ու  
խումից յետոյ բոլորեքեանք ցըւեցին իրանց  
տները։ Ա.Հմէդ խանը այդ գիշեր յաւ տրա-  
մադրութեան մէջ էր։ Նա այժմ կերած-խմած  
և զւարճութիւնից կշտացած, մտածում էր, թէ  
որ հարեմի հետ զւարճութիւն անի։ Ուս-  
տի փոքր ինչ մտածելուց յետոյ, նրա միտն  
ընկաւ Գիւլի խանումը, որի հետ շատ ժամանակ էր ինչ զւարճութիւն չէր արել, և  
մտադրեց անպայման այդ գիշերը նրա մօտ  
անցկացնել։ Խանը այդ մտադրութիւնից յե-  
տոյ կանչեց հարեմի գլխաւոր կառավարիչ  
Մուխտարին և ասաց նրան։

— Գնա՞ յալտնի Գիւլի խանումին, որ նա  
այս գիշեր պատրաստի, իրան ընդունելու-  
թեան համար։

— Ա.Հքիս վրայ, — ասաց Մուխտարը և  
դուրս եկաւ խանի մօտից։ Նա ցած իշաւ դէպի  
պարտէզը ու գնաց Գիւլիին յալտնելու խանի  
հրամանը։

Գիւլի խանումը այդ միջոցին իր սենեակումն էր նստած և մտածում էր, երբ յանկարձ աղախիններից մէկը հաղորդեց որ Մուխտարը գալիս է:

Մուխտարի անունը լսելով, իսկոյն նա տեղից վեր թռաւ:

Մուխտարը չուզենալով ներս գնալ Գիւլի սենեակը, դուրսը կանգնած աղախիններից մէկին ասաց.

—Գնա խանումիդ յայտնիր, որ այս գիշեր խանը պիտի իրան մօտ ժամանակ անցկացնի, թռղ պատրաստ լինի:

Աղախինը շտապով ներս մտաւ սենեակը և հաղորդեց Մուխտարի ասածը:

Գիւլին ոչ մի պատրաստութիւն չըսեսաւ խանին ընդունելու համար,—ինչպէս զուգւում, զարդարւում էին միւս հարեմները, երբ խանը մէկի կամ միւսի մօտն էր կամենում գնալ,—այլ իր սովորական շորերով նըստած սպասում էր իր բռնակալին:

—Հացի ժամանակ է, —յանկարձ լուեցամ մի ձայն. դա ներքինապետ Ասլանն էր, որ կամենում էր սեղան պատրաստել: ճաշը վերջացնելուց յետոյ պէտք է բոլորն էլ պառկէին քնելու: Խանը այժմ պատրաստ էր դա. լու իր որոշած կնոջ մօտը, բայց դեռ նրանց

ճաշելը մի քանի ժամ ուշացրեց նըրան: Սեղանը պատրաստ փռած էր, հարեմի այն սենեակի մէջ, որ յատուկ պատրաստած էր նրանց ճաշելու համար:

Կանայք, իրանց սենեակներից դուրս գալով, գնում էին սեղանատուն ճաշելու. բոլոր աղախինները զբաղւած էին սեղանները կարգի բերելով, իսկ Ասլանը ժամանակից օգուտ քաղելով՝ վաղեց Գիւլիի մօտ և գտաւ նրան սենեակում մենակ նստած, որը պատրաստում էր ճաշի գնալու...

—Շուտ հագնուիր, առանց ժամանակ կորցնելու, —ասաց Ասլանը ներս մտնելով և հանելով իր հագի շորերը:

—Այդ ինչ ես անում, հարցրեց Գիւլին:

—Այժմ խօսելու ժամանակ չէ, —պատասխանեց Ասլանը և հանելով իր վրայի հագուստը, ասաց. —այս դու հագիր:

Գիւլին տեսնելով որ այդ շորերը իրան ազատելու համար են՝ ասաց.

—Ախ, սիրելիս, չէ որ այս գիշեր խանը ինձ մօտ է լինելու:

—Այդ ես գիտեմ, —ասաց նա, —դու մի-այն շուտով հագնւիր:

Գիւլին տեսնելով որ ճար չըկալ, և հազիւ կարող լինէր այդպիսի մի յարմար ժամանակ

Ճեռք բերել, իսկոյն հագաւ Ասլանի շորերը,  
իսկ վերջինս հագաւ քրոջ շորերը: Երբ եր-  
կուսն էլ պատրաստ էին, Ասլանը դարձաւ  
դէպի նրան ասելով.

—Դէ, հիմա առ այս բանալին և առանց  
կասկածանքի ուղղակի անցիր դէպի պարտե-  
զը, բացիր ներքեւի դարպասի դուռը և դուրս  
դնա ու ինձ սպասիր:

—Բայց դու այդ հագուստով բնչ ես  
ուզում անել:

—Ոչ մի բան,—ասաց նա, —այժմ ես  
քո փոխարէն կ'ընդունեմ խանին: Գիւլին իս-  
կոյն սենեակից դուրս եկաւ և ուղղակի ան-  
ցաւ պարտէզով ու դուրս գնաց. նրա անցնե-  
լու ժամանակ աղախիններից մի քանիսը տե-  
սան, բայց կարծելով որ Ասլանն է, ոչինչ  
չասացին:

## 彪.

Գիշերից բաւական անցել էր:

Խանը գիշերւայ խալաթը հագին, մտաւ  
Գիւլին սենեակը: Գիւլին խանումը այդ ըսպէ-  
ին պառկած էր իր անկողնում. խանը ներս  
մտնելով, դուռը փակեց և գիշերւայ խալա-

թը հանելով, մօտեցաւ մահճակալին, որտեղ  
պառկած էր իրան պէս մի տղամարդ:

Այդ վալրկեանին աղամարդ խանումը տե-  
ղից վեր թռչելով, երկու երկար և ուժեղ  
ձեռքերով այնպէս սեղմեց խանի կոկորդը, որ  
մի վալրկեանում երկուսն էլ գլորւեցին փա-  
փուկ անկողնու վրայ:

Խանը այժմ գտնուում էր վերջին ճգնա-  
ժամի մէջ:

Կոկորդի սեղմելուց, խանը՝ ձայնը բոլո-  
րովին կտրւած՝ ասաց.

—Դուք ո՞վ էք, Գիւլի խանումն էք, թէ  
հոգէառ հրեշտակը:

—Այո՛, նրա ազատիչ հրեշտակն եմ, նը-  
րան ազտացի, բայց հարկաւոր է քեզ ևս  
ազատել այս աշխարհի երեսից, որպէսզի վերջ  
դնելի այսքան անմեղ ստրուկներին:

Այդ ասելուց յետոյ, խանը կամենում էր  
ժամանակից օգտւելով յանկարծ աղաղակել,  
բայց Ասլանի սրի մի հարւածը վերջ դրեց  
նրա կեանքին:

Եւ այսպէս խանը այդ գիշեր զւարճու-  
թեան փոխարէն իր մահը գտաւ Գիւլիի ան-  
կողնում:

Այնուհետեւ Ասլանը առանց ժամանակ  
կորցնելու, խանին հանգստացրեց և փոխելով  
իր հագուստը, հագաւ խանի խալաթը

և դուրս գալով սենեակից, անցաւ պարտիզի  
միջով ուղղակի գարպասից, որտեղ սպասում  
էր նրան իր քոլը Գիւլին, և նրանք երկուսով  
այդ գիշերն անյալտացան քաղաքից:



ԳԻՆՆ է 10 ԿՈՊԵԿ.

Վաճառւում է բոլոր գրավաճառա-  
նոցներում:

